Թեմատիկ պլանավորում

Հայոց լեզու – 9-րդ դասարան

Տարեկան ժամաքանակ – 102 ժ

Շաբաթական ժամաքանակ – 3 ժ

Հեղինակներ՝ Հովհաննես Բարսեղյան, Փառանձեմ Մեյթիխանյան

«Աստղիկ Գրատուն» հրատ. 2018 թ.

Թեմա	Նպատակ	Վերջնարդյունքներ
Դերբայական դարձված	-ծանոթացնել հայերենի շարահյուսական կառուց-վածքի առանձնահատկություններին, -զարգացնել բարդ մտքերը ձևակերպելու և տարբեր ձևերով արտահայտելու հնարավորությունները -զարգացնել բազմաբնույթ և բարդ տեքստեր ընկալելու և կազմելու կարողությունները՝ շարահյուսական բազմազան կառույցների ճիշտ և տեղին գործածությամբ - գաղափար տալ դ/դ-երով կառույցներ կիրառելու մասին	-կատարել շարահյուսական վերլուծություն՝ կապված դերբայական դարձվածով նախադասությունների տեսակների որոնման, ճանաչման և մեկնաբանման հետ -կարողանալ փոփոխել դերբայական դարձվածների շարադասությունը՝ համապատասխանեցնելով խոսքի կառույցին -կարողանալ կետադրել դերբայական դարձվածներով նախադասությունները
Ժամ	**Էջ**	**Դաս**
3	19 – 22	Դերբայական դարձված
2	19 – 22	Դերբայական դարձվածը նախադասության մեկ անդամ
2	22 – 25	Դերբայական դարձվածի շարադասությունը
3	22 – 25	Դերբայական դարձվածի կետադրությունը
3	25	Չկետադրվող դերբայական դարձված
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Բարդ նախադասություն	-զարգացնել բազմաբնույթ և բարդ տեքստեր ընկալելու և կազմելու կարողությունները՝ շարահյուսական բազմազան	-կատարել վարժություններ՝ կապված միևնույն միտքը տարբեր լեզվական կառույց-ներով արտահայտելու հետ (պարզ, բարդ հա-

	կառույցների ճիշտ և տեղին գործածությամբ -գրավոր և բանավոր խոսքում ճանաչել բարդ նախադասությունները՝ պահպանելով նրանց իմաստային և հնչերանգային ամբողջականությունը -զարգացնել ճանաչողական հմտությունները, համեմատել և տարբերել պարզ և բարդ նախադասությունները, տեսնել նմանություններն ու տարբերությունները, ընդհանրացնել -զարգացնել հաղորդակցական և ստեղծագործական կարողությունները՝ ազատ գործածել բարդ նախադասությունները, կարողանալ ընտրել դրանց տեսակը՝ կախված խոսքի ոճից և գործառական բնույթից -հասնել նրան, որ ճիշտ կետադրեն բարդ համադասական և ստորադասական նախադասությունները -զարգացնել ճանաչողական, հաղորդակցական կարողություններ	մադասական, բարդ ստորադասական նախադասություններով, դերբայական դարձվածով նախադասությամբ են) -տարբերակել շաղկապների և հարաբերական դերանունների ճիշտ գործածության շրջանակները՝ խուսափելու տարածված սխալներից (որպեսզի/որ, որը/ինչը, ոչ թե ... այլ, ոչ միայն ... այլև են) -կարողանալ ճիշտ կետադրել բարդ ստորադասական նախադասությունները

Ժամ	Էջ	Դաս
2	28 – 30	Բարդ նախադասություն, նրա կառուցվածքը
2	32	Բարդ նախադասության բաղադրիչների իմաստային, կառուցվածքային և հնչերանգային միասնությունը
2	35 – 38	Բարդ համադասական նախադասություն

2	41 – 47	Բարդ համադասական նախադասությունների կապակցումը (շաղկապով և առանց շաղկապի)
2	41 – 47	Բարդ համադասական նախադասությունների կապակցումը (շաղկապով և առանց շաղկապի)
2	41 – 47	Բարդ համադասական նախադասությունների կապակցումը (շաղկապով և առանց շաղկապի)
2	51 – 52	Բարդ համադասական նախադասությունների կետադրությունը
2	54 – 55	Ստորոգյալի լրիվ գեղչումը
2	54 – 55	Ստորոգյալի մասնակի գեղչումը
3	54 – 55	Ստորոգյալի լրիվ կամ մասնակի գեղչման հետ կապված կետադրությունը
2	62 - 64	Բարդ ստորադասական նախադասություն: Գերադաս և ստորադաս նախադասություններ
2	65	Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը
2	66 - 67	Ստորադասական շաղկապներ
2	68	Ստորադասական շաղկապներ
1	69 - 70	Ստորադասական շաղկապներ
2	72 – 74	Ստորադասական շաղկապների իմաստային հարաբերությունները
2	75, 76	Շաղկապական կապակցման մի քանի կաղապար
2	77, 78, 79	Շաղկապական կապակցման մի քանի կաղապար
2	81 - 82	Հարաբերական դերանուններ և հարաբերյալներ
3	83 - 84	Հարաբերյալ-հարաբերական կապակցման մի քանի կաղապար
3	87 - 88	Չեղչված շաղկապով բարդ ստորադասական նախադասության կետադրությունը
4	90 - 91	Ստորադաս նախադասության շարադասությունն ու կետադրությունը
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Մեջբերվող խոսք	-ըմբռնել տալ ուղղակի խոսքի հաղորդակցական բնույթը, հասկացնել խոսքի բովանդակությունը ճիշտ վե-րարտադրելու կարևորությունը -ընկալել տալ գեղարվեստական խոսքի տարբեր դրսևորումները ըստ հեղինակի նպատակադրության	-ընթերցելերկխոսական բնույթի տեքստեր (պիեսներ, վեպերի երկխոսական և մենախոսական հատվածներ ևն) և վերլուծել -զգացմունքները և մտքերը արտահայտել մենախոսության տեսքով -կատարել մտքերի փոխանակություն գիտական որևէ հարցի շուրջ -կազմակերպել դերային խաղ, որի մեջ կա հարցազրույցի տարր -կատարել խմբային աշխատանք

	- ասելիքը ձևակերպել և արտահայտել որպես գրավոր կամ բանավոր մենախոսություն - մտքեր արտահայտել փոխնիփոխ՝ չշեղվելով թեմայից և պահպանելով խոսքի տրամաբանական ընթացքը -սովորեցնել երկխոսություն վարելու կարգը, պահպանել բարեկրթության նորմերը -սովորեցնել հարցազրույց վարելու անհրաժեշտ պայմանները (տեղյակություն, ճիշտ կողմնորոշում, վայելուչ վարքագծի դրսևորում):	(քննարկման միջոցով հարցազրույցի թեմայի ընտրություն, առանձին խմբերով ընդհանուր պլանի կազմում, անհատական հարցերի մշակում) - կազմակերպել հարցազրույց դասարանում, դպրոցում, դպրոցից դուրս
Ժամ	**Էջ**	**Դաս**
2	102	Խոսքի մեջբերման ձևերը՝ ուղղակի և անուղղակի
1	102	Խոսքի մեջբերման ձևերը՝ ուղղակի և անուղղակի
2	104 - 106	Ուղղակի խոսք: Հեղինակի խոսքի դիրքը մեջբերվող խոսքի նկատմամբ
2	104 - 106	Ուղղակի խոսք: Կետադրությունը
2	107 - 108	Անուղղակի խոսք
2	107 - 108	Ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակի խոսքի
2	107 - 108	Ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակի խոսքի
2	109	Երկխոսություն
2	109 - 110	Երկխոսական տեքստի կետադրությունը
2	110 – 112	Ուղղակի խոսքի գործառական ոլորտները. Երկխոսությունը առօրյա խոսքում
2	115 - 116	Երկխոսությունը գեղարվեստական գրականության մեջ
2	120	Երկխոսությունը դրամատիկական ստեղծագործություններում
2	123, 124	Երկխոսությունը մասնագիտական բնագավառում: Մենախոսություն
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Գործնական գրությունները	-սովորեցնել գրել դիմում, կազմել արձանագրություն և հաշվետվություն	-կարողանալ ըստ անհրաժեշտության գրել դիմում, կազմել արձանագրություն և հաշվետվություն
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	131 – 132	Դիմում
1	132 - 135	Արձանագրություն

1	135 - 136	Հաշվետվություն
2		Ընթացիկ կրկնություն
2		Ամփոփիչ գրավոր աշխատանքներ
6		Թեմատիկ գրավոր աշխատանքներ
2		Գործնական աշխատանքներ
4		Տարեվերջյան կրկնություն

Դաս 1 Դերբայական դարձված Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ի՞նչ է դերբայական դարձվածը:
2. Ո՞ր դերբայներով է արտահայտվում դերբայական դարձվածի գերադաս անդամը:
3. Նախադասության մեջ ի՞նչ պաշտոններ է կատարում դերբայական դարձվածը:

Գտնել դերբայական դարձվածը, ընդգծել դերբայը, որոշել դերբայական դարձվածի շարահյուսական պաշտոնը.

Վաղ առավոտյան՝ ժամը վեցին, նա գնաց այգի՝ ջրելու նորատունկ ծառերը:

Առատ լույսից շլացած՝ անընդմեջ այս ու այն կողմ էին ցատկոտում խայտացող ձկները:

Բոլորը նայեցին իրար՝ ապարդյուն փորձելով կռահել՝ ի՛նչ կարող է պատահած լինել:

Երիտասարդի բանակից ուղարկած նամակը խիստ անհանգստացրեց բոլորին:

Ցանկանալով փոքր-ինչ կտրվել հոգսերից՝ ես իջա այգի:

Հեծյալները դանդաղեցրին ձիերի ընթացքը՝ նկատելով հեռվում երևացող բնակավայրը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ինչ է իրենից ներկայացնում դերբայական դարձվածը:
2. Դերբայական դարձվածի գերադաս անդամը դերբայն է, որն արտահայտվում է անորոշ դերբայի տարբեր հոլովաձևերով, հարակատար, համակատար և ենթակայական դերբայներով:
3. Նախադասության մեջ կատարում է ենթակայի, ստորոգելիի, գոյականական և բայական անդամի լրացումների պաշտոններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նախադասության մեջ ընդգծել դերբայական դարձվածները:
2. Նախադասության մեջ որոշել՝ ո՛ր դերբայով է արտահայտված դերբայական դարձվածի գերադաս անդամը:
3. Որոշել դերբայական դարձվածի շարահյուսական պաշտոնը:

Դաս 2 Դերբայական դարձվածի շարադասությունը և կետադրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ինչպիսի՞ շարադասություն ունի դերբայական դարձվածը նախադասության մեջ:

2. Ո՞ր դերբայներով կազմված դերբայական դարձվածներն են համարվում կետադրվող:

3. Ինչպե՞ս է կետադրվում շաղկապին հաջորդող դերբայական դարձվածը:

4. Ո՞ր դեպքում դերբայական դարձվածը կարող է չկետադրվել:

Կետադրել նախադասությունները, գտնել դերբայական դարձվածները՝ որոշելով շարադասությունը.

Ընդարձակ քարե սանդուղքով վեր բարձրանալով նրանք մտան մի մութ միջանցք:

Այդ մտքից անհանգստացած ու փոքր- ինչ երկյուղած շուռ եկավ դեպի խորհրդավոր ուղևորը կարծես պաշտպանվելու նրանից:

Տեսնելով նրանց կյանքի փորձից բխած իմաստությունը մտա խիտ թփուտների տակ ու լավ թաքնվեցի:

Գուցե փրփրահոս Բասուտա գետը խառնվելով մի ուրիշ կարկաչուն գետի հասնում է այն լազուր ծովին որի ափին գույնզգույն ավազի վրա մի օր նստել էին կինը և նկարիչը անէացած լիովին ու կտրված առօրյայից:

Վարպետ Սարգիսն էր այդ որը ճակատի քրտինքը սրբելով հողոտ բաճկոնը մեջքին գցելով նստեց մի քարի ծխելու իր նախշազարդ ծխամորճը:

Լիլթը ականակիտ աղբյուրի մոտ նստած ականջ դրած նրա բյուրեղյա նվագին անէացած նայում էր աստղազարդ երկնքին:

Կազմել նախադասություններ՝ տարբեր դիրքերում գործածելով հետևյալ դերբայական կապակցությունները.

արևն առած իր թիկունքին, բարձունքից գահավեժ ցած թափվելով, ապագայի վառ հույսերով տարված, գործից անտեղյակ լինելով, ձեռքերը վեր կարկառած, իր պահվածքից ամաչելով, չնայած հիվանդ լինելուն, նախքան դասի գնալը, իր վարքով բոլորին զգաստացնելով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Դերբայական դարձվածն ունի ազատ շարադասություն, կարող է հանդես գալ առաջադաս, միջադաս և վերջադաս:

2. Կետադրվող են համարվում որպես գերադաս անդամ հանդես եկող անորոշ և հարակատար դերբայներով կազմված դերբայական դարձվածները:

3. Եթե դերբայական դարձվածը հաջորդում է շաղկապին, կարող է կետադրվել թե՛ բութով (առաջադաս), թե՛ ստորակետով (միջադաս):

4. Դերբայական դարձվածը չի կետադրվում, եթե կատարում է ենթակայի, ստորոգելիի, հատկացուցչի, նախադաս որոշչի, խնդիրների պաշտոն, ինչպես նաև չի կետադրվում համակատար դերբայով արտահայտված դերբայական դարձվածը, որը կատարում է ժամանակի պարագայի պաշտոն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Նախադասության մեջ տարբերակել առաջադաս, միջադաս և վերջադաս դերբայական դարձվածները:

2. Ճիշտ կետադրել առաջադաս, միջադաս և վերջադաս դերբայական դարձվածները:

3. Կազմել նախադասություններ, որոնցում դերբայական դարձվածը կարող է կետադրվել թե՛ բութով, թե՛ ստորակետով:

4. Առանձնացնել չկետադրվող դերբայական դարձվածները:

Դաս 3 Բարդ նախադասություն, նրա կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ի՞նչ է բարդ նախադասությունը:

2. Ինչպե՞ս են տարբերվում պարզ և բարդ նախադասությունները:

3. Ինչպե՞ս են կապակցվում բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները:

Գտնել բարդ նախադասությունները:

Որոշել բարդ նախադասության կառուցվածքը և կապակցման եղանակը.

Այդ ժամանակ Ծովանը գլխով հրեց դուռը և ներս մտավ:

Երբ հասան մի մեծ գյուղ, անծանոթը Ծովանին ծախեց մի երկար մարդու, նրանից ինչ-որ թղթեր առավ ու էլ չերևաց:

Երբ անտառից դուրս եկան, հեռվից լսվեց շների հաչոց: Օրը սաստիկ ցուրտ էր: Քամին հետզհետե սաստկանում էր:

Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, կցանի կորեկ, աշնանը կիջնի ձորերը, կհավաքի միրգ և ցախ, ձմեռը կլսի հին զրույցներ…

Երազանքներով տարված՝ մոտեցավ գյուղին: Ամեն ինչ առաջվանն էր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մեկից ավելի պարզ նախադասություններից կազմված նախադասությունը կոչվում է բարդ նախադասություն:

2. Պարզ և բարդ նախադասությունները իրարից տարբերվում են կառուցվածքով: Պարզ նախադասությունը ունի մեկ ստորոգյալ, բարդը՝ մեկից ավելի:

3. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները իրար կապակցվում են համադասական և ստորադասական շաղկապներով, հարաբերական դերանուններով, շարահարությամբ (անշաղկապ):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված տեքստում ընդգծել բարդ նախադասությունները:

2. Որոշել բարդ նախադասության կառուցվածքը (երկբաղադրիչ, բազմաբաղադրիչ):

3. Որոշել՝ ինչպես են իրար կապակցված բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ո՞ր նախադասությունն է կոչվում բարդ համադասական:

2. Ինչպիսի՞ն է բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ համադաս նախադասությունների հարաբերությունը:

3. Ո՞ր դեպքում կարող է անկախ կիրառություն չունենալ երկրորդ համադաս նախադասությունը:

Գտնել բարդ համադասական նախադասությունները, որոշել կազմությունը և ցույց տալ, թե որ համադաս նախադասությունները կարելի է գործածել առանձին՝ իբրև ինքնուրույն նախադասություն, որոնք՝ ոչ:

Վազերից հյութ էր ծորում, ապրիլյան մաքուր լույսի մեջ շողարձակում էր ծիրանենու խեժը, իսկ թաղն ավերող մորեխամպը բնավ էլ մորեխամպ չէր, վազող տղաների խումբ էր:

Խիտ եղեգնուտներից աղմուկով վեր են բարձրանում սուզահավերը, հպարտորեն պտտվում լճի հայելու վրա:

Ցանկապատի վրա թոշնել էր վարունգի թաղը, դեղին ծաղիկները կծկվել էին այտերի վրա չորացած արցունքի նման:

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:

Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եկել:

Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ, սակայն, նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը՝ դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղիններ ժողովում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ համադասական են կոչվում այն բարդ նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչ նախադասությունները համազոր են կամ համադաս:

2. Բարդ համադասական նախադասության համադաս նախադասությունները կարող են լինել *երկկազմ* (բաղադրիչ համազոր բոլոր նախադասություններն ունեն ենթակա

և ստորոգյալ) և *միակազմ* (բաղադրիչ համազոր բոլոր նախադասությունները կա՛մ անենթակա են, կա՛մ բայական անդեմ, կա՛մ անվանական անդեմ):

3. Երկրորդ համադասը անկախ կիրառություն չի ունենում, եթե զեղչվում է ենթական, ստորոգյալը՝ ամբողջովին կամ մասնակիորեն (հաճախ զեղչվում է ենթակայի հետ), երկրորդ համադասում հանդես են գալիս դերանուններ, որոնք փոխարինում են առաջին համադասի որևէ անդամի կամ անդամների:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Գտնել բարդ համադասական նախադասությունները:

2. Գտնել և վերլուծել բարդ համադասական նախադասության համազոր նախադասությունները:

3. Որոշել, թե որ համադաս նախադասությունները կարելի է գործածել առանձին, որոնք՝ ոչ:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ինչպե՞ս են կապակցվում բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ համադաս նախադասություններն իրար:

2. Քանի՞ տեսակ են լինում համադասական շաղկապները:

3. Անշաղկապ կապակցման դեպքում ինչպե՞ս են բաժանվում համադաս նախադասությունները միմյանցից:

Կետադրի՛ր տրված նախադասությունները , որոշի՛ր կապակցման եղանակը, ընդգծի՛ր համադասական շաղկապները՝ նշելով տեսակը:

Այս վայրերում գրեթե հող չկա ողջ օրը քայլում եմ քարերի ու խճի վրայով:

Կածանները ճչում են այնտեղ

Ջրվեժները լռում են

Ծաղիկները թռչում են այնտեղ

Թիթեռները բուրում են (Հ. Սահյան):

-Բա էն ոչխարները ի՞նչ եղան գողացած չլինե՞ն:

Խոսքի վրա ակամա աչքերս ոչխարներ են որոնում բայց հայացքս թեքում եմ Գոմերի քարից մեկ է այս ամուլ լեռը ոչխար ապաստանող չէ և նայում եմ Հաճարկուտ լեռան կողմը: Բացատը նորից պայծառ ժպտում է բացատը Այգեձորի հնոց այրերն են արարել Բաբունց տոհմը:

Երեկ նույն այս ժամն էր Բաբունց տոհմի երեց Թունի ապոր մոտ էի:

Բաբունց Թունին պառկած էր անկողնում գլխաշորով փաթաթվել էր վերմակը քաշել գլխին գրիպ էր: Ծեր ոսկորները մրսում էին (Մ. Գ):

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար պողպատի ձայն հանում: Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ և սիմինդրի տերևը որպես բեկված սուսեր ընկնում էր քամու առաջ (Ակ. Բ.):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ համադաս նախադասություններն իրար կապակցվում են *համադասական շաղկապներով*, *շարահարությամբ*, *ինչերանգով*, որը կապակցման համընդհանուր միջոց է այս երկուսի համար:

2. Համադասական շաղկապները լինում են՝ *մենադիր*, *կրկնադիր*, *զուգադիր*:

Ըստ իմաստային երանգի լինում են՝ *միավորիչ*, *հակադրական (ներհակական)*, *տրոհական*, *մեկնական*:

3.Առանց շաղկապի կապակցման դեպքում համադաս նախադասությունները միմյանցից բաժանվում են *ստորակետով* և *միջակետով*:

Առանց շաղկապի կապակցման դեպքում կարևորվում է ինչերանգի դերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել բարդ համադասական նախադասության բաղադրիչ համադաս նախադասությունների կապակցման ձևերը:

2.Նախադասության մեջ որոշել համադասական շաղկապների տեսակները:

3. Ճիշտ կետադրել բարդ համադասական նախադասությունները:

Դաս 6 Ստորոգյալի լրիվ կամ մասնակի զեղչումը և կետադրում Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ո՞ր ստորոգյալն է զեղչվում ամբողջովին:

2. Ո՞ր ստորոգյալներն են զեղչվում և՛ մասամբ, և՛ ամբողջովին:

3. Ինչպե՞ս է կետադրվում նախադասությունը ամբոջովին և մասամբ զեղչված ստորոգյալների դեպքում:

Վերականգնի՛ր զեղչված ստորոգյալները և կետադրի՛ր:

Քո երգերի մեջ թախծության միրաժ

Քո ձեռքերի մեջ սարսուռի որոտ

Անուշ մխանք կա քո շրթունքներին

Եվ քո ձայնի մեջ լույս կա վեհերոտ:

Քո ծիծաղի մեջ թռչող մանուկներ

Քո հայացքի մեջ կրկին թախծություն

Որ թե կուրորեն թարգմանենք բառով

Պիտ որ հնչի Սիրաբաղձություն (Ռ. Դ.):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ամբողջովին զեղչվում է պարզ ստորոգյալը:

2. Մասամբ զեղչվում են թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ ստորոգյալները:

3. Ամբողջովին կամ մասամբ զեղչված ստորոգյալի փոխարեն դրվում է բութ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կազմել բարդ նախադասություն, որտեղ ստորոգյալը զեղչվում է ամբողջովին:

2. Կազմել բարդ նախադասություններ,որտեղ ստորոգյալները զեղչվում են թե՛ մասամբ, թե՛ ամբողջովին:

3. Ճիշտ կետադրել զեղչված ստորոգյալով նախադասությունները:

Դաս 7 Բարդ ստորոդասական նախադասություն: Գերադաս և ստորադաս նախադասություն, կապակցումը: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ո՞ր նախադասությունն է կոչվում բարդ ստորադասական:

2. Ո՞ր նախադասությունն է կոչվում գլխավոր կամ գերադաս:

3. Ո՞ր նախադասությունն է կոչվում երկրորդական կամ ստորադաս:

4. Ինչպե՞ս են կապակցվում գերադաս և ստորադաս նախադասությունները միմյանց:

Համարակալի՛ր տրված բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունները, ընդգծի՛ր գերադաս նախադասությունները:

Այնտեղ, որտեղ հայը չի կարողացել հաղթել սրով, հաղթել է գրով՝ ծաղրելով ու ոչնչացնելով իր ոսոխներին և գալիք սերունդներին փոխանցելով իր երազը, հույսն ու հավատը:

Գրիչները մտածել ու գրել են գրքի մասին այնպես, ինչպես կգրեին կենդանի մարդու մասին:

Ձեռագրերից ամեն մեկի վրա կան տեսանելի և անտես հետքերը ա՛յն արյան, որ թափել է մեր ժողովուրդն իր ազատության ու անկախության համար:

Երբ կարդում ես գրիչների կցկտուր տողերը, քո առջև կանգնում է մեր աշխատավոր ժողովուրդն իր առողջ բնազդով, իմաստությամբ, սրամտությամբ: Ռամիկ մի գրիչ, հոգ տանելով իր աղքատ համագյուղացիների մասին, որոնք ամբողջ բերքը ոստիկանին, վանքին ու իշխանին տալուց հետո վշտից ու անզոր կատաղությունից գինուց հարբում էին, նրանց տասներկու խորհուրդ է տալիս «հարբեցողության վնասների մասին»:

Գրիչների անձնվեր աշխատանքի շնորհիվ է, որ մեզ հասել է հայոց ամենամեծ գանձը՝ Մատենադարանի հարստությունը:

Եվ ես երազում եմ այն օրը, երբ Մատենադարանի շենքի առջև կամ նրա որևէ սրահում մյուս արձանների կողքին կկանգնեցվի ձեռագիր արտագրողի կամ գրչի արձանը…

Ձեռըս գնա՛, դառնա ի հող,

Գիրըս մնա հիշատակո՛ղ (Գ. Է.):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այն բարդ նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող պարզ նախադասություններից մեկը գերադաս է, գլխավոր, իսկ մյուսը կամ մյուսները լրացնում կամ պարզաբանում են գլխավորի միտքը, կոչվում են բարդ ստորադասական նախադասություններ:

2. Գլխավոր կամ գերադաս է կոչվում այն նախադասությունը, որն ունի իրեն լրացնող որևէ նախադասություն:

3. Երկրորդական կամ ստորադաս է կոչվում այն նախադասությունը, որը փոխարինում կամ լրացնում է գլխավորի որևէ անդամին և կամ ամբողջ գլխավորին:

4. Գլխավոր և երկրորդական նախադասությունները միմյանց կապակցվում են *ստորադասական շաղկապներով, հարաբերական դերանուններով ու հարաբերյալներով, շարահարությամբ*:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված նախադասություններից առանձնացնել բարդ ստորադասական նախադասությունները:

2. Առանձնացնել գլխավոր (գերադաս) նախադասությունը:

3. Առանձնացնել երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

4. Որոշել գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցման միջոցները:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ո՞ր շաղկապներն են կոչվում ստորադասական:

2. Քանի՞ տեսակ են լինում ստորադասական շաղկապները:

3. Կարո՞ղ է ստորադասական շաղկապը նախադասության անդամ լինել:

Կազմի՛ր մենաղիր շաղկապներով կապակցված հինգ բարդ ստորադասական նախադասություն:

Կազմի՛ր զուգաղիր շաղկապներով կապակցված հինգ բարդ ստորադասական նախադասություն:

Վերլուծի՛ր նախադասությունները.

Բոլորովին կարիք չկա, որ դու անհանգստանաս այդ երիտասարդի մասին:

Բոլորին անհանգստացնում էր այն, որ Արմենը խիստ անտարբեր էր դարձել ամեն ինչի նկատմամբ:

Օ՜յ, անշուշտ, կայցելեմ քեզ:

Նրանք ծնվում են իրենց ծնողի անզորությունից, որպեսզի դառնան նոր զորեղություն:

Գովերգում եմ այն խարույկը, որ բնավ չի մտահոգվում, թե իր մահն է իր իսկ բոցը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ստորադասական են այն շաղկապները, որոնք բարդ նախադասության մեջ ստորադաս (երկրորդական) նախադասությունը կապում են գերադաս (գլխավոր) նախադասությանը:

2. Ստորդասական շաղկապները լինում են *մենաղիր* և *զուգաղիր*:

3. Շաղկապները նախադասության անդամ չեն լինում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նախադասության մեջ գտնել ստորադասական շաղկապները:

2. Որոշել ստորադասական շաղկապների տեսակները:

3. Վերլուծել նախադասությունները և սյունակներով առանձնացնել նյութական, քերականական և վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը:

Դաս 9 Ստորադասական շաղկապների իմաստային հարաբերությունները Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ինչպիսի՞ իմաստային հարաբերություններով կարող են կապակցվել ստորադաս նախադասությունները գերադաս նախադասություններին:

2. Ինչպե՞ս են իրականացվում այդ հարաբերությունները:

3. Ըստ իմաստի քանի՞ տեսակ են լինում ստորադասական շաղկապները:

Դու՛ս գրիր երկրորդական նախադասությունները, որոշի՛ր կապակցման միջոցները:

Գլխավորի ո՞ր անդամին են լրացնում կամ փոխարինում դրանք:

Հարևանները մտահոգ պատմում էին, որ գիշերը կասկածելի ձայներ են լսել:

Անվերջ հարցնում էր, թե իր հետ ինչպես կվարվեն այդ դեպքից հետո:

Ես շարունակում էի լսել այն, ինչ ինձ վաղուց արդեն չէր հետաքրքրում:

Ես հասկացա ու գիտեմ, որ աշխարհը մի

Երգ է հնչեղ, հրաշունչ – հրաշունչ քամի…

Բայց ես գիտեմ, որ սիրեցի քեզ մի օր,

Երբ հասկացա, որ աշխարհում դու չկաս,

Բայց երազի ուղիներով հեռավոր

Դու մի գիշեր պիտի իջնե՛ս, պիտի գաս (Ե. Չ.):

Ոստիկանները հարցուփորձ արին նաև այն մասին, թե ովքեր են վերջին անգամ գյուղից հեռացել:

Ամենից շատ խոսում էին նրանից, որ այդ տղան իրենց շատ էր մտահոգում:

Այն մասին, թե ինչպես են շարունակելու ապրել, հետաքրքրվում էին բոլորը:

Բոլորն էին պատմում այն մասին, թե ինչ սխրանքներ է կատարել նա կռվի դաշտում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գերադաս նախադասություններին ստորադաս բաղադրիչ նախադասությունները կապվում են տարբեր հարաբերություններով՝ *ենթակայական, ստորոգելիական, որոշչային, հատկացուցչային, բացահայտչային, խնդրային, պարագայական*:

2. Բոլոր հարաբերություններն իրականացվում են *ստորադասական շաղկապներով, հարաբերական դերանուններով և հարաբերյալներով, շարահարությամբ*:

3. Ըստ իմաստի ստորադասական շաղկապները լինում են *մենիմաստ* և *բազմիմաստ*:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բարդ ստորադասական նախադասության մեջ որոշել, թե ստորադաս բաղադրիչ նախադասությունները ինչ հարաբերությամբ են կապված գերադաս նախադասություններին:

2. Գտնել երկրորդական նախադասությունները, որոշել կապակցման միջոցները:

3. Տարբերակել ստորադասական շաղկապներն ըստ իմաստի:

Դաս 10 Շաղկապական կապակցման մի քանի կաղապար Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ո՞ր շաղկապներով կապակցված երկրորդական նախադասություններն են արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման ժամանակը:

2. Ո՞ր շաղկապներով կապակցված երկրորդական նախադասություններն են արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման պատճառը:

3. Ո՞ր շաղկապներով կապակցված երկրորդական նախադասություններն են արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման նպատակը:

4. Ո՞ր շաղկապներով կապակցված երկրորդական նախադասություններն են արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման պայմանը:

5. Ո՞ր շաղկապներով կապակցված երկրորդական նախադասություններն են արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման հիմունքը:

Տրված նախադասություններում ընդգծի՛ր կապակցման միջոցները՝ նշելով, թե իմաստային ի՛նչ հարաբերություն են դրանք արտահայտում:

Թեև հեռավոր սարերի գոգերում ձյունը դեռ նստած էր բամբակի նման, բայց ամենուրեք կանաչ էր ու ծաղիկ:

Ես ձայն չէի հանում, թեև դա ինձ ցավ էր պատճառում:

Թեպետ ջրերը ցամաքել են, բայց աղբյուրի տեղը մինչև օրս էլ կա:

Չնայած որ սաստիկ հոգնած էր, Ներսիկը մեկ-մեկ գրավվում էր ճանապարհի երկու կողմերու երևացող ծաղիկներով:

Չնայած պառավն ինձ զգուշացրեց Շամիրամի «ուղտի քարերից», բայց ես մոլորվեցի Նեմրութի ավազաբլուրների մեջ:

Եթե մեկն այդ պահին մոտենար նրա ափին և ուշադիր նայեր ջրերի խորքը, կտեսներ մեծ եռուզեռ՝ մի խառնիճաղանջ իրարանցում:

Եթե քրդերին չհաջողվի հայերին ծնկի բերել, ապա մարտի մեջ կմտնի կանոնավոր բանակը:

Ախր մենք ծնվեցինք, որ ավելի ազնիվ պահենք մեր ազնիվ հողը:

Նրանք մեմքենայով ընթանում էին գետափ, որ ջրի ախորժալուր խշշոցն ունկնդրեն և բնության գրկում իրենց հանգիստը վայելեն:

Սուլթանը ձգտում էր Սասունի հարցը օր առաջ լուծել, քանի որ օսմանյան կայսրության տարածքում սպառնալից չափերով ծավալվում էին ընդդիմադիր շարժումները:

Հայ առևտրականը իր ապրանքը սպառելու համար չէր կարող դրանք գյուղեր տանել, քանզի ճանապարհին կողոպտվելու վտանգ կար:

Մինչ դու գնացիր և երկիրն ամբողջ քեզ հետ տարար,

Ես ավերակներին ինչպե՞ս թագավորեմ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. *Մինչ, մինչև (որ), մինչդեռ, նախքան, քանի, քանի դեռ, հենց, հենց որ, թե չէ* շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման ժամանակը:

2. *Քանի որ, որովհետև, քանզի, որովհետև…, ուստի, այն պատճառով…, որ* շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման պատճառը:

3. *Որպեսզի, որ* շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման նպատակը:

4. *Եթե եթե…, ապա, եթե միայն, թե, թե որ, որ, այն պայմանով…, որ* շաղկապներով և հարաբերյալներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման պայմանը:

5. *Թեև, թեպետ(և), թեկուզ(և), չնայած (որ), փոխանակ* շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման հիմունքն ու հակառակ հիմունքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Գտնել այն շաղկապները, որոնք հանդես են գալիս երկրորդական նախադասության կազմում և արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման ժամանակը:

2. Գտնել այն շաղկապները, որոնք հանդես են գալիս երկրորդական նախադասության կազմում և արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման պատճառը:

3. Գտնել այն շաղկապները, որոնք հանդես են գալիս երկրորդական նախադասության կազմում և արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման նպատակը:

4. Գտնել այն շաղկապները, որոնք հանդես են գալիս երկրորդական նախադասության կազմում և արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման պայմանը:

5.Գտնել այն շաղկապները, որոնք հանդես են գալիս երկրորդական նախադասության կազմում և արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման հիմունքն ու հակառակ հիմունքը:

Դաս 11 Հարաբերական դերանուններ և հարաբերյալներ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Որո՞նք են հարաբերական դերանունները և ի՞նչ են ցույց տալիս:

2. Ի՞նչ է հարաբերյալը, որտե՞ղ է այն հանդես գալիս:

3. Ո՞ր դերանուններն են հանդես գալիս որպես հարաբերյալներ:

Ընդգծի՛ր երկրորդական նախադասությունները և որոշի՛ր, թե գլխավորի ո՛ր անդամին են դրանք լրացնում:

Որոշի՛ր յուրաքանչյուր նախադասության կապակցական կաղապարը:

Երանի՜ նրան, ով իր անձը զոհաբերում է հանուն հայրենիքի:

Հազար ափսոս նրանց, ովքեր չապրեցին մինչև այս երջանիկ ժամանակները:

Իսկական բժիշկը գնահատվում է նրանցից, ովքեր նրա մեջ տեսնում են նվիրյալ ու անձնազոհ մարդուն:

Տիկին Հակոբյանը հարգված է նրանց կողմից, ովքեր քիչ թե շատ նրան ճանաչում են:

Խոսքս վերաբերում է հատկապես նրանց, ովքեր գործի հանդեպ հետաքրքրություն չեն ցուցաբերում:

Ծերունին իր ողջ կյանքն ապրեց նրանց հետ, ովքեր միշտ գնահատում էին իր փորձառությունն ու իմաստությունը:

Քայլի՛ր նրա հետ, ով դժվար պահին քեզ չի լքում:

Դու անմտորեն հեռացար նրանից, ով դժվար պահին քեզ միշտ սատար էր կանգնել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Հարաբերական դերանուններն են՝ *ով, ինչ, ինչպիսի, ինչքան, ինչչափ, ինչպես, որ, որպես, որքան, որպիսի, որերորդ, որտեղ, երբ, ուր, քանի, քանիսը, քանիերորդ*:

Հարաբերական դերանունները ցույց են տալիս նախադասության կապը՝ վերաբերումը մյուսին:

2. Հարաբերյալը գլխավոր (գերադաս) նախադասության այն բառն է, որին համապատասխանում՝ վերաբերում է հարաբերական դերանունը երկրորդական նախադասության մեջ: Հարաբերյալը ազդանշում է երկրորդական նախադասության առկայությունը, հաճախ էլ՝ բնույթը:

Հարաբերյալը հանդես է գալիս գլխավոր նախադասության կազմում:

3. Որպես հարաբերյալներ մեծ մասամբ հանդես են գալիս ***այն, այնպիսի, այնտեղ, այնքան, այնչափ, այնպես, նա*** *ցուցական դերանունները*, որոնք իրենց իմաստով փոխարինում են գոյականին, ածականին, թվականին, մակբային:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված դերանուններից առանձնացնել հարաբերական դերանունները և կազմել նախադասություններ:

2. Գլխավոր նախադասության մեջ գտնել հարաբերյալները և որոշել խոսքիմասային պատկանելությունը:

3. ***Այն, այնպիսի, այնտեղ, այնքան, այնչափ, այնպես, նա*** *ցուցական դերանունները նախադասության մեջ գործածել որպես հարաբերյալներ*:

Դաս 12 Հարաբերյալ - հարաբերական կապակցման մի քանի կաղապար [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ո՞ր կապակցական կաղապարներով երկրորդական նախադասությունն է արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության կատարման տեղը:

2. Ո՞ր կապակցական կաղապարներով երկրորդական նախադասությունն է արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության կատարման ձևը:

3. Ո՞ր կապակցական կաղապարներով երկրորդական նախադասությունն է արտահայտում գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության կատարման չափն ու քանակը:

Տրված նախադասություններում ընդգծի՛ր կապակցման միջոցները՝ նշելով, թե իմաստային ի՛նչ հարաբերություն են դրանք արտահայտում:

Տղաները պառկում էին այնտեղ, որտեղ արևի ճառագայթները հասցրել էին տաքացնել:

Զբոսշրջիկներն արշավը սկսեցին այնտեղից, որտեղ երեկ կանգ էին առել:

Դա օգոստոսին էր, բայց այնպես ցուրտ էր մեր սարերում, որ շներն անգամ դողում էին իրենց բներում:

Սակայն Լևոնը այդ առավոտ ծովափ գնաց այնպես զգույշ, որ որսորդներն իրեն չտեսնեն ու չկանչեն՝ թռռ կարկատելու:

Դու այնքան խմի՛ր, որ առյուծ հեծնես,

Որ առյուծ հեծնես, ուր ուզես, տանի,

Ա՛խ, ոչ թե այնքան, որ ձիդ կորցնես,

Եվ գինին մորդ էլ մտքիցդ հանի (Հ. Շ.):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. ***Այնտեղ…, որտեղ, ուր, այնտեղից…, որտեղից, որտեղ, ուր, այնտեղով…, որտեղով*** կապակցական կաղապարներով երկրորդական նախադասությունը արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության կատարման տեղը:

2. ***Այնպես…, որ, թե, այնպես…, ինչպես(որ), ինչ ձևով, ինչ կերպ, ոնց որ, ասես (թե), կարծես (թե)*** կապակցական կաղապարներով երկրորդական նախադասությունը արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության ձևը:

3. ***Այնքան…, որ, այնքան…, որքան, ինչքան, ինչչափ, մինչև (որ)*** կապակցական կաղապարներով երկրորդական նախադասությունը արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության չափն ու քանակը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նախադասության մեջ գտնել այն կապակցական կաղապարները, որոնցով կազմված երկրորդական նախադասությունն արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության կատարման տեղը:

2. Նախադասության մեջ գտնել այն կապակցական կաղապարները, որոնցով կազմված երկրորդական նախադասությունն արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության կատարման ձևը:

3. Նախադասության մեջ գտնել այն կապակցական կաղապարները, որոնցով կազմված երկրորդական նախադասությունն արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության չափն ու քանակը:

Դաս 13 Զեղչված շաղկապով բարդ ստորոդասական նախադասության կետադությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Այլ կերպ ինչպե՞ս է անվանվում անշաղկապ կապակցումը:

2. Ի՞նչն է կարևորվում շարահարությամբ կապակցված բարդ ստորադասական նախադասություններում:

3. Ինչպե՞ս է կետադրվում զեղչված շաղկապով բարդ ստորադասական նախադասությունը:

Կազմի՛ր անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում զեղչված են ստորադասական շաղկապները:

Որոշի՛ր կապակցման միջոցները և կետադրի՛ր, վերականգնի՛ր համապատասխան շաղկապը:

Մի թելը քաշես հազար կարկատան կթափվի:

Լուն գլխից ընկնի հազար կտոր կլինի:

Կալից ինչ խեր տեսանք կալատակից ինչ տեսնենք:

Կրակ տամ խանձահոտ չի գա:

Հավ չի դառել ոսկի ձվեր է ածում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Անշաղկապ կապակցումը շարահարությունն է:

2. Շարահարությամբ կապակցված բարդ ստորադասական նախադասություններում կարևոր դեր է կատարում *հնչերանգը*:

3. Զեղչված շաղկապի կամ դերանվան փոխարեն դրվում է բութ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել բարդ ստորադասական նախադասության կապակցման եղանակը:

2. Որոշել՝ ինչպիսի հնչերանգով են կապակցված բարդ ստորադասական նախադասությունները:

3. Ճիշտ կետադրել զեղչված շաղկապով բարդ ստորադասական նախադասությունը:

Դաս 14 Ստորադաս նախադասության շարադասությունն ու կետադրությունը
Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Բարդ ստորադասական նախադասություններում ինչպիսի՞ շարադասությամբ կարող է հանդես գալ երկրորդական նախադասությունը գերադասի նկատմամբ:

2. Ե՞րբ է երկրորդական նախադասությունը միշտ վերջադաս դրվում:

3. Ինչպե՞ս է տրոհվում ստորադաս նախադասությունը գերադաս նախադասությունից:

Կետադրի՛ր տրված նախադասությունները և նշի՛ր կապակցման միջոցները:

Գտի՛ր գերադաս նախադասությունները և դրանցում տեղադրի՛ր երկրորդականին վերաբերող համապատասխան հարցը:

Ես չէի հիշում, որ քեռի Նահապետը երբևէ այդպես երկար խոսեր և այդպիսի խոսքերով դիմեր հարազատներին…(Հր. Ք.):

Արդյոք գիտե՞ր նա որ ինքը ղողանջուն անտառների ազատ երեխան է եղել որ իր մայրը այնտեղ է կաթ տվել իրեն որ այնտեղ է իր հայրը եղջյուրները խփել կաղնիներին: Արդյոք գիտե՞ր որ այդ խուլ շառաչը անու՛շ-անու՛շ օրորել է իրեն առաջին անգամ և ո՛վ գիտե գուցե երազներ է բերել իրեն սիրուն երազներ…(Ավ. Իս.):

Գարնան ջինջ երկնքի վրայով սահում էր մի սպիտակ ամպ ասես արար աշխարհին հպարտությամբ ցույց էր տալիս որ անհաս բարձունքում լողանում է արևի շողերի մեջ:

Ինձ թվում էր թե ես նրան էլ չեմ տեսնելու:

Լավ հիշում եմ Ճուտիկին որ միշտ դպրոց էր գալիս հոր մեծ փափախը գլխին և երկար հնամաշ տրեխներով: Որբ էր Ճուտիկը լռիկ-մնջիկ մի երեխա որին բոլորը սիրում էին…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ ստորադասական նախադասություններում երկրորդական նախադասությունը գերադասի նկատմամբ հանդես է գալիս ***առաջադաս, միջադաս, վերջադաս*** շարադասությամբ:

2. Երկրորդականը միշտ վերջադաս է դրվում, եթե լրացնում է գլխավորի ոչ թե մեկ անդամի, այլ ամբողջ նախադասությանը. նման դեպքերում այն ունենում է հետևանքի երանգ:

3. Ստորադաս նախադասությունը գերադաս նախադասությունից միշտ տրոհվում է ստորակետով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բարդ ստորադասական նախադասություններում գտնել ***առաջադաս, միջադաս, վերջադաս*** երկրորդական նախադասությունները:

2. Նախադասության մեջ գտնել այն կառույցները, որոնք թելադրում են գլխավորի և երկրորդականի շարադասությունը:

3.Ճիշտ կետադրել բարդ ստորադասական նախադասությունը:

Դաս 15 Ուղղակի և անուղղակի խոսք: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Քանի՞ տեսակ է լինում խոսքը:

2. Ո՞ր խոսքն է ընդունված անվանել մեջբերվող խոսք:

3. Ո՞ր խոսքն է կոչվում ***ուղղակի***:

Ընդգծե՛լ ուղղակի խոսքը:

Փոքրիկ տղան նայում էր, թե ինչպես է պապիկն ինչ-բան գրում, և ապա հարցրեց.

-Դու պատմվածք ես գրում այն մասին, ինչ մեզ հե՞տ է կատարվել: Հնարավո՞ր է, որ այդ պատմվածքը մի քիչ էլ իմ մասին լինի:

Պապիկը մի պահ ընդհատեց գրելը, ժպտաց և պատասխանեց թոռնիկին.

-Ես քո մասին գրում եմ, ճիշտ է, բայց ուզում եմ՝ իմանաս նաև մեկ այլ բան: Մատիտը, որով գրում եմ, պակաս կարևոր չէ, քան իմ գրած խոսքերը: Ես հուսով եմ, երբ դու մեծանաս, կսիրես այն:

Տղան հետաքրքրությամբ նայեց մատիտին, բայց որևէ յուրահատուկ բան չնկատեց.

-Բայց այն նման է բոլոր մատիտներին, որ ես երբևէ տեսել եմ իմ կյանքում:

- Դա կախված է նրանից, թե ինչպես ես դու նայում իրերին: Մատիտի մեջ հինգ որակներ կան, որոնք եթե քեզ հաջողվի պահպանել քո մեջ, ապա դու մշտապես խաղաղ ու ներդաշնակ կլինես աշխարհի հետ… (Պաուլո Կուելյո «Մատիտի պատմությունը»):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Խոսքը լինում է երկու տեսակ՝ ***գրավոր*** և ***բանավոր***:

2. Բանավոր կամ գրավոր խոսքում հաճախ խոսողը կամ հեղինակը մեջբերում է ուրիշի կամ իր ասածը: Այդ խոսքն ընդունված է անվանել ***մեջբերվող*** կամ ***ուրիշի խոսք:***

3. Ընդհանուր խոսքաշարում անփոփոխ, բառացի մեջբերվող խոսքը կոչվում է ***ուղղակի խոսք*** :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Գրավոր շարադրել խոսքը և բանավոր վերարտադրել:

2. Բանավոր և գրավոր օրինակներ բերել մեջբերվող խոսքով:

3. Տեքստում ընդգծել ուղղակի խոսքը:

Դաս 16 Ուղղակի խոսքի կետադրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ինչպե՞ս է կետադրվում ուղղակի խոսքը:

2. Ինչպե՞ս է կետադրվում մտքում ասված, հիշված ուղղակի խոսքը:

3. Ինչպիսի՞ն կարող է լինել հեղինակի խոսքի դիրքը ուղղակի խոսքի նկատմամբ:

Ընդգծել ուղղակի խոսքերը, որոշել հեղինակի խոսքի դիրքը ուղղակի խոսքի նկատմամբ:

-Դու երեխային թո՛ղ մեզ մոտ, Ավե՛տ ապեր, ես կհագցնեմ, կպահեմ նրան, ինչպես որդուս,- ասաց Պետրոսը:

Մայրը բռնեց Ստեփանի ձեռքը՝ ասելով.

-Աստծու սիրուն, դու մի՛ գնա, ես ինքս կգնամ.եթե ինձ վրա բարկանա, ես ձայն չեմ հանի, իսկ դու հաստատ կռիվ կսարքես:

-Մի՞թե Դուք ինձ չեք հիշում,- զարմացած ֆիմեց ինձ անծանոթը, հետո ավելացրեց,- ես ձեր տանը երկու անգամ եղել եմ Ձեր եղբոր՝ Ասատուրի հետ:

«Ես պետք է անպայման հաղթեմ, առանց հաղթանակի ետդարձի ճամփա չկա,»- մտածեց նա:

Կետադրի՛ր նախադասությունները:

Ես պետք է թաքցնեմ իմ հուզմունքը մտածեց նա:

Արա՛մ դասերդ սովորիր հանդիմանեց մայրը:

Ես չեմ կարող հետաձգել այդ հանդիպումը ասաց Ռոստոմը ես ուղում եմ նրան ասել այն, ինչ ուրիշները չեն հանդգնի ասել:

Քանի որ Դուք արևելագետ եք, ապա գուցե Դուք կարող եք կարդալ այս տարօրինակ գրվածքը շարունակեց ծերունին:

Գործը մարդու համար է հանգստացնում էր նրանց Մարգարիտ տատը ես ինչպես հանգիստ նստեմ:

Կինը դառնությամբ մտածում էր Հանուն ինչի՞ էր իմ այս մեծահոգությունը. միևնույնն է, ինձ գնահատող չկա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ողղակի խոսքը սկսվում է գծիկով կամ չակերտով և գրվում է մեծատառով, իսկ հեղինակի խոսքից անջատվում է ստորակետ- գծով:

2. Եթե ուղղակի խոսքը մտքում է ասվում, հիշվում է, մեջբերվում է, ապա գրվում է չակերտների մեջ:

3. Հեղինակի խոսքը կարող է դրվել ուղղակի խոսքից առաջ, ուղղակի խոսքից հետո և կարող է կիսել ուղղակի խոսքը, այսինքն՝ միջադասվել ուղղակի խոսքին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված նախադասություններից դուրս գրել ուղղակի խոսքը:

2. Կետադրել տրված նախադասությունները և առանձնացնել չակերտներում գրված ուղղակի խոսքը:

3. Որոշել հեղինակի խոսքի դիրքը ուղղակի խոսքի նկատմամբ (առաջադաս, միջադաս, հետադաս):

Դաս 17 Անուղղակի խոսք: Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակի խոսքի: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ո՞ր խոսքն է կոչվում անուղղակի:

2. Ուղղակի խոսքը անուղղակի դարձնելիս ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվում:

3. Անուղղակի խոսքում առկա հարցական դերանունը կետադրվու՞մ է:

Տրված նախադասություններում ուղղակի խոսքը փոխակերպի՛ր անուղղակիի:

Դպրոցի տեսուչը, ցույց տալով ինձ նամակը, հարցրեց.

-Կարո՞ղ ես ասել՝ ում նամակն է, և ով կարող էր դիմել նման խարդախության:

-Ա՜խ, սիրելիս, ես քեզ վաղուց էի ուզում տեսնել,- խոստովանեց տղան:

-Դու տու՞ն ես գնում,- հարցրի ընկերոջս:

-Ու՞ր ես գնում,- հարցրեց Միքայելը:

Նա մոտեցավ քարավանի պետին և խոլաձայն հարցրեց.

-Քանի՞ ժամանակ է, որ այստեղ անապատ է գոյացել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ընդհանուր խոսքաշարում պատմողաբար, ոչ բառացի մեջբերվող խոսքը կոչվում է անուղղակի:

2. Ուղղակի խոսքը անուղղակի դարձնելիս վերանում են ուղղակի խոսքի գրության գծիկը, ստորակետ-գծիկները, չակերտները, հարցական և հրամայական նախադասությունները դառնում են պատմողական. վերանում է հարցում և հրաման արտահայտող հնչերանգը, կատարվում են դիմային փոփոխություններ:

3. Անուղղակի խոսքում առկա հարցական դերանվան վրա հարցական նշան չի դրվում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել անուղղակի խոսքը ուղղակի խոսքից:

2. Ուղղակի խոսքը ճիշտ փոխակերպել անուղղակիի:

3. Ճիշտ կետադրել անուղղակի խոսքը:

Դաս 18 Երկխոսություն: Ուղղակի խոսքի գործառական ոլորտները: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ի՞նչ է երկխոսությունը:

2. Որտե՞ղ է գործածվում երկխոսությունը:

3. Ի՞նչ է մենախոսությունը:

Արտագրի՛ր և կետադրի՛ր տրված համառոտ առակները:

Ուղտին հարցրին թե ինչու է վիզդ ծուռ ասաց ինչս է ուղիղ:

Ծառն Աստծուն գանգատ արեց կացնի ձեռքից թե ինձ կտրում է ասաց կոթը հենց քեզնից է:

Աղվեսի դունչը խաղողին չհասավ ասաց խակ է:

Մեկի մորուքը վառվեց

Սպասիր տաքանամ ասաց մյուսը:

Քամին մարագին ասաց

Դուռդ բաց դարման եմ բերում

Ասաց

Իմ միջի եղածը մի տար քո բերախը պետք չէ:

Էշին աչքալուսանք տվին թե թոռ ես ունեցել ասաց

Իմ բեռն իմ մեջքից չեն վերցնելու:

Տրված երկխոսության մեջ գտի՛ր քերականական սխալները:

-Բարև՛, հորեղբա՛յր:

-Բարև՛, Կարե՛ն: Ինչպե՞ս ես: Ձերո՞նք ինչպես են:

-Լավ են, շնորհակալ եմ: Վարդանը ու՞ր է: Ձեր հետ եկե՞լ է Ծաղկաձոր:

-Չէ՛, մնաց տանը: Պետք էր, որպեսզի մեկը տանը հսկեր: Իսկ դու ու՞մ հետ ես եկել: Հեռվում կանգնածը ընկե՞րդ է: Անունն ինչպե՞ս է:

-Տիգրանն է՝ իմ դասընկերը: Այստեղ պարապում է իմ հետ, որպեսզի լավ մարզավիճակ ձեռք բերենք:

-Ապրե՛ք, շատ էլ ճիշտ եք անում: Դու գիտես, որ մեր համար քո հաջողությունները շատ գնահատելի է:

-Շնորհակալ եմ, կաշխատեմ արդարացնեմ ձեր հույսերը: Դե լավ, ես գնամ: Ցտեսությու՛ն Ձեզ: Բոլորին բարևի՛ր:

-Անպայմա՛ն կբարևեմ: Իսկ դու փողոցն անցնելիս զգու՛յշ եղիր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուղղակի խոսքի դրսևորման ամենատարածված ձևը երկխոսությունն է, հարց ու պատասխանը, մտքերի փոխանակումն ու պարզաբանումը:

2. Երկխոսությունը գործածվում է առօրյա խոսքում, գեղարվեստական գրականության մեջ, դրամատիկական ստեղծագործություններում, մասնագիտական բնագավառում:

3. Առաջին դեմքով ներկայացված յուրաքանչյուր քնարական խոսք կարելի է դիտարկել իբրև մենախաստություն՝ ամենատարբեր թեմաներով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կազմակերպել դերային խաղ, որի մեջ կա հարցազրույցի տարր :

2. Կարդալ տարբեր բնույթի երկխոսական տեքստեր, վերլուծել:

3. Իր մտքերը թղթին հանձնել մենախոսության տեսքով:

Դաս 19 Գործնական գրություններ. դիմում, արձանագրություն, հաշվետվություն

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար

1. Ի՞նչ է դիմումը:

2. Ի՞նչ է արձանագրությունը:

3. Ի՞նչ է հաշվետվությունը:

Գրի՛ր դիմում քո նախընտրած ընտրովի առարկայից քննություն հանձնելու համար:

Կազմի՛ր դասարանական ժողովի արձանագրություն:

Գրի՛ր հաշվետվություն՝ հայոց լեզվից կամ գրականությունից կատարած գործնական աշխատանքի մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Դիմումը պաշտոնական գրության մի ձև է, որը սովորաբար ուղղված է լինում պաշտոնատար անձանց՝ հիմնարկ- ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների ղեկավարներին՝ որևէ հարց լուծելու ակնկալիքով:

2. Ժողովում կամ նիստում քննարկված բոլոր հարցերը գրի են առնվում: Գրառված այդ փաստաթուղթը կոչվում է արձանագրություն:

3. Հաշվետվությունը հիմնարկի կամ կազմակերպության՝ որևէ ժամանակահատվածում որևէ հարցի կապակցությամբ կատարած աշխատանքների գրավոր ներկայացումն է ավելի բարձր, վերադաս օղակի առջև:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Ըստ անհրաժեշտության գրել դիմում:

2. Կազմել արձանագրություն:

3. Կազմել հաշվետվություն: